

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՍԵՂՄԱԳԻՐ

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1030-L որոշման հավելված 1-ով հաստատված միջոցառումների ծրագրի վերաբերյալ՝

1) **49-րդ կետի՝** Հայաստանի Հանրապետությունում առաջիկա 5 տարիների կտրվածքով իրականացվելիք իրավական և դատական բարեփոխումների նախագիծը վերաբերյալ հայտնում ենք, որ 2018 թվականի հոկտեբերի 8-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ երկարաձգելու նպատակով:

2) **50-րդ կետի՝** մշակվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի լրամշակված տարբերակը 2018 թվականի դեկտեմբերի 27-ին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

3) **51-րդ կետի՝** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: Հաշվի առնելով ՀՀ կառավարության կառուցվածքի փոփոխությունները նախագիծը անհրաժեշտ է ներառել ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների հաջորդ ծրագրում և ներկայացնել նոր ձևավորված կառավարության քննարկմանը:

4) **54-րդ կետի՝** 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացրել «ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

5) **57-րդ կետի՝** Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

6) **58-րդ կետի՝** մշակվել և սույն թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

7) **60-րդ կետի՝** մշակվել է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգում իրավիճակի բարելավման նպատակով 2018-2038 թվականների ռազմավարության և դրա իրականացման 2018-2038 թվականների միջոցառումների ծրագրի նախագիծը: Նախագիծը կրկին կքննարկվի շահագրգիռ կողմերի հետ և լրամշակվելուց հետո կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

8) **68-րդ կետի՝** ներկայումս լրամշակման փուլում է գտնվում «Մնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

9) **69-րդ կետի՝** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը գտնվում են լրամշակման փուլում:

10) **70-րդ կետի՝** Կենսաթոշակի՝ որպես սեփականության իրավունքի՝ լիազորագրի հիման վրա իրացման գործուն երաշխիքների ներդրման նպատակով լրամշակման փուլում է գտնվում «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

11) **71-րդ կետի՝** «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը 2018 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:

12) **73-րդ կետի՝** «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը ներկայումս գտնվում են հանրային քննարկման փուլում:

13) **76-րդ կետի՝** մշակվել և 2018 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Պետական ծառայությունների մատուցման միասնական օպերատորներին պետական և համայնքային ծառայությունների պատվիրակման, պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության և ծառայությունների մատուցման արդյունավետ և նորարար եղանակների վերաբերյալ» ծրագիրը:

ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 275-Ն որոշման՝

## 1. հավելված 1-ով հաստատված միջոցառումների ծրագրի վերաբերյալ՝

- 1) **92-րդ կետի՝** հասարակական կազմակերպությունների, պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին ներկայացված առաջարկությունների, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում մշակվել, շրջանառվել և հանրային քննարկման է ներկայացվել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի նախագծի առաջին տարբերակը: Միաժամանակ նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:
- 2) **93-րդ կետի՝** ՀՀ կառավարության կողմից 2018 թվականի ապրիլի 12-ին ընդունվել է «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» N 439-Ն որոշումը:
- 3) **94-րդ կետի՝** մշակվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որը ընդունվել է ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 19-ի նիստում:
- 4) **95-րդ կետի՝** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը ներկայումս գտնվում են լրամշակման փուլում:
- 5) **96-րդ կետի՝** մշակվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի լրամշակված տարբերակը 2018 թվականի դեկտեմբերի 27-ին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:
- 6) **97-րդ կետի՝** մշակվել են «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք 2018 թվականի դեկտեմբերի 26-ին ներկայացվել են շահագրգիռ մարմիններին:
- 7) **98-րդ կետի՝** «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում:

## 2. Հավելված 2-ով հաստատված միջոցառումների ծրագրի վերաբերյալ՝

### 1) 156-րդ կետի՝

1-ին ենթակետի՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (սույն կետում այսուհետ նաև՝ Կազմակերպություն) քրեակատարողական հիմնարկներում հանրակրթություն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամաններով ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ: Հաստատվել է ազատագրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները: Վերոգրյալի արդյունքում Կազմակերպությունը դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն անհրաժեշտ ֆինանսավորումը ստանալու համար, և այն հատկացվելուց հետո՝ 2019 թվականից կիրականացնի ազատագրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթակրթությունը:

2-րդ ենթակետի՝ Կազմակերպության կողմից մշակվել են կալանավորված անձանց և դատապարտյալների մասնագիտական կրթության ծրագրերը: Մասնագիտական կրթական ծրագրերի ընտրության գործընթացում հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ինչպես նաև կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանակում ուսումնասիրված կարիքները: Ծրագիրը չի իրականացվել ֆինանսավորման բացակայության պատճառով:

Կենտրոնի կողմից իրականացվել է Գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագիրը, որի շրջանակում իրականացվել են մի շարք դասընթացներ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում: Դասընթացի մասնակակիցների թիվը՝ 121 շահառու:

3-րդ ենթակետի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալությանը տրամադրվել է այն դատապարտյալների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց ազատագրկման ձևով պատիժը կրելու ավարտին մնացել է վեց ամիս: Միաժամանակ, գործակալության հետ համաձայնություն է ձեռք բերվել գործընթացն իրականացնել քրեակատարողական հիմնարկ առ հիմնարկ՝ համաներումից հետո՝ հաշվի առնելով ծրագրի ժամկետային սահմանափակումները:

4-րդ ենթակետի՝ Պրոբացիայի շահառուների կողմից մասնագիտական հմտությունների ձեռքբերման նպատակով շահագործման են հանձնվել 3 սենյակներ, որոնք նախատեսված են համակարգչային, թաղիքագործության, լուսանկարչության դասընթացների իրականացման համար:

## **2) 157-րդ կետի՝**

1-ին ենթակետի՝ 11 քրեակատարողական հիմնարկներում առաջնային բժշկական օգնության տրամադրման համար արդեն իսկ ձեռք են բերվել 20 անուն 90 միավոր անհրաժեշտ բժշկական սարքավորումներ և պարագաներ: Քրեակատարողական հիմնարկները համալրվել են նաև բժշկական օգնության և սպասարկման անձնակազմի համար անհրաժեշտ կահույքով:

2-րդ ենթակետի՝ կատարվել է սանիտարահամաճարակային և հիգիենիկ իրավիճակի ուսումնասիրություն: Միաժամանակ, խնդրո առարկայի վերաբերյալ կազմվել են մի շարք ուղեցույցներ, ձեռնարկներ և ծրագիր:

3-րդ ենթակետի՝ իրականացվել են քրեակատարողական ծառայության շուրջ 1000 աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ: Բոլոր քրեակատարողական հիմնարկների թվով 14 հոգեբանների համար իրականացվել են մասնագիտական մեկշաբաթյա դասընթացներ:

4-րդ ենթակետի՝ մշակվել են և ընդունվել (կամ ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել) բժշկական ծառայությունները կանոնակարգող իրավական ակտերը:

5-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 1-ի թիվ 204-Ն որոշմամբ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստեղծմամբ նախատեսվում է բարձրացնել քրեակատարողական համակարգի բուժաշխատողների աշխատավարձերի սահմանաչափերը և ստեղծել նրանց համար աշխատանքային ավելի գրավիչ և բարենպաստ պայմաններ, ինչը կհանգեցնի կադրային հագեցվածության խնդրի լուծմանը: Միաժամանակ նշենք, որ ՊՈԱԿ-ի հաստիքային միավորների քանակը կազմելու է 171 հաստիքային միավոր, իսկ համալրվող 8 քրեակատարողական համակարգի բուժաշխատողների մեծամասնությունը կազմելու է միջին բուժանձնակազմը:

## **3) 158-րդ կետի՝**

1-ին ենթակետի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներդրվել և լիարժեք գործարկվել է էլեկտրոնային հարցումների միասնական [www.e-request](http://www.e-request) հարթակը:

2-րդ ենթակետի՝ ավարտին է հասցվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության e-Penitentiary էլեկտրոնային կառավարման ժամանակակից ծրագրային համակարգի մշակման աշխատանքները («Կալանավորված անձանց և դատապարտյալների տեղեկատվական ռեգիստր»):

3-րդ ենթակետի՝ իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության e-probation էլեկտրոնային համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացման նպատակով:

4-րդ ենթակետի՝ մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի ընդունման արդյունքում ամբողջովին հնարավոր կլինի անցնել փաստաթղթերի՝ էլեկտրոնային մուտքագրման համակարգին:

5-րդ ենթակետի՝ ՀՀ արդարադատության նախարարության «Թեժ գիծ» ծառայության էլեկտրոնային հարթակը լիարժեք գործարկված է:

6-րդ ենթակետի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվել են իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական [www.e-draft](http://www.e-draft) հարթակի զարգացմանը և արդիականացմանն ուղղված շարունակական աշխատանքներ:

7-րդ ենթակետի՝ մեկնարկվել են [www.arlis.am](http://www.arlis.am) իրավական տեղեկատվական կայքի արդիականացմանն ուղղված աշխատանքները:

8-րդ ենթակետի՝ մեկնարկվել է «Աջակցություն սնանկության համակարգի բարելավմանը Հայաստանում» դրամաշնորհային ծրագիրը: Իրականացվում են շարունակական աշխատանքներ սնանկության միասնական հարթակի մանրամասն տեխնիկական առաջադրանքի մշակման և հարթակի ներդրման ֆինանսական միջոցների հատկացման համար:

9-րդ ենթակետի՝ ընդունվել է «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի հիման վրա արդիականացվել է էլեկտրոնային նոտար՝ [www.e-notary.am](http://www.e-notary.am) համակարգը: Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով նախատեսվում է էլեկտրոնային կապ ստեղծել նոտարների, բանկային և

վարկային կազմակերպությունների միջև՝ նոտարին տրամադրելով էլեկտրոնային կնիք և էլեկտրոնային թվային ստորագրություն:

10-րդ ենթակետի՝ 2018 թվականի մարտի 29-ին ընդունվել է «Դատարանների և հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային եղանակով օրենքով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 350-Ն որոշումը, որով սահմանվել է դատարանների և հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային եղանակով օրենքով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու կարգը:

11-րդ ենթակետի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի հիման վրա նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով նախատեսվում է էլեկտրոնային կապ ստեղծել նոտարների, բանկային և վարկային կազմակերպությունների միջև՝ նոտարին տրամադրելով էլեկտրոնային կնիք և էլեկտրոնային թվային ստորագրություն:

#### **4) 159-րդ կետի՝**

1-ին ենթակետի՝ դատավորների մասնագիտական զարգացման և վերապատրաստման ծրագրերի՝ միջոցառման իրականացման ժամկետ է նախատեսված դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Դատավորների մասնագիտական զարգացման և վերապատրաստման ծրագրերի իրականացման աշխատանքները գտնվում են նախապատրաստական փուլում:

2-րդ ենթակետի՝ միջոցառման իրականացման ժամկետ է նախատեսված դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Դատավորի աշխատակազմի և դատական այլ ծառայողների վերապատրաստման ծրագրերի իրականացման աշխատանքները գտնվում են նախապատրաստական փուլում:

Բարձրագույն դատական խորհրդի և դատավորների Ընդհանուր ժողովի գործունեության աջակցության՝ գործնականում թափանցիկության շարունակական բարելավման, մասնագիտական ներուժի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառման իրականացման ժամկետ է նախատեսված դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Սույն կետով նախատեսված միջոցառումը իրականացվելու է շարունակական պարբերականությամբ: